

ՄԱՍԻՍ

Շ Ա Ք Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 13

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

31 ՄԱՐՏ 1901

Մասիս շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Գրանց կամ 5 բուլլի : Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու , եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պանչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները , ինչպէս նաեւ Ղալաթիոյ , Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ :

Յոֆէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԵ

دو علیہ دہ غلطہ دہ « ماسیس » غزنہ سی ادارہ سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Կ. Պոլիս , Ղալաթիա , Նորաստանկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ի Ի Ն Ի Օ Ն

Հ Ր Դ Ե Հ Ի Ե Ի Կ Ե Ն Ա Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վեասք	240.000.000 Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19.500.000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105.000.000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18.000.000.000 »

Կ Ե Ն Ա Յ Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վեասք	99 000.000 Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253.000.000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150.000.000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»-ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՓՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ** .

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով Իւնիօնի ապահովագրուողք **ԶԵՐԾ** են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք . որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՌԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրուքեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ**

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալարա , Թահսապուրուն խան , Օսմ. Պանգային դիւանք

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՍԱԳԱՅԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Ղալաթիա , Գուրեւունլու խան քիւ 7

Շաղիկ լրագրի տոյն Տպարանին մէջ խնամով կը կատարուին ապագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ , — ծանուցումներ , հարսանեկան հրաւիրագիրներու , այցեւորումներու , մահազգներու , աւետարական շրջաբերականներու , եւ այլն , — պատրաստութիւնը , — գիւրամատչելի պայմաններով :

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ , ՄԵԾ ՓՈՂՈՑ , ԹԻԻ 200

Կալարա-Սերայի Լիսէին դէմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— 31 ՄԱՐՏ 1901 —

ԹԻԻ 13

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընկերային իմաստասիրութիւն. Ընտանիք. Ե՛ւ Ի՞նչ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ. — Թե ինքն կուգեմ ամուսին. ՅՈՒԽԷ.
(Փանոսեանի մենտորութեան ոտանաւոր-պատասխան մը . . . Փանոսեանի միջոցաւ դրկուած) : — Գործ-
նական խրատներ. ՔՐԻՋԱՆԹԷՄ : — Լեզուարանական. Աղաւաղեալ բառեր. ՅՈՎ. ԳԱԶԱՆՃԵԱՆ :
— Յիսուն տարուան մեջ. ԱՐՇԱԼՊՅՈՅ ԼՃԵԱՆ. — Վիճակագրական. — Կ. Պոլսոյ Քառանանե-
րուն ցուցակը : — Յուշատետք :

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

Ամբիոյ տեսութեան մը մէջ պիտի ջանամ պատկերացնել հայ ժողովրդեան վիճակն, ընտանեկան, կրթական ու գրական :

Ա.

ԸՆՏԱՆԻՔ

Ընկերութեան մը հիմն, ընկերութեան մը մանրանկարն է ընտանիքն : Եթէ ընտանիքն յարակցութեան ձգտի, նոյն ձգտումն ընկե-
րութեան մէջ ալ կը հաստատուի. իսկ եթէ քայքայման, փոխադարձարար : Ընտանեկան, ապա եւ ընկերական յարակցութեան ու կազ-
մական հաստատութեան էական պայմանն է յարմար ամուսնութիւնն : Յանգիցնութիւն կա՛մ մարդախոտան անկեղծութիւն համարուի կը դիտուի թէ բարոյական տեսակէտով անա-
սունք երբեմն լաւագոյն զգացում ունին, ըստ որում սէ՛րն (ըլլայ տախի կամ ցանկալութիւն՝ այլ ոչ չա՛հ) է որ արուն եւ էգը կը միացնէ կեն-
դանեաց մէջ, որոնց մէջ նաեւ՝ մարդկային ընկերութեան մէջ պատահածին պէս տնտե-
սական կամ այլ նկատումներ չեն յետաձգեր միացումն. յետաձգու՛մ, որ սեռին զարգա-
ցումը կը յարմարենէ եւ հուսկ ուրեմն սեռը

կը փճացնէ : Բաղաքակրթութիւնն, որ զմարդ-
րնական վիճակէն տակաւ կը հեռացնէ, շա-
հախօղրական վայրագ մրցման մը յառաջ բե-
րած քաղաքակրթութիւնը մէկ կողմանէ տա-
րասեւ անհատներն ամուսնական կապերով
կը միացնէ հաշիւէ քան սէրէ դրդեալ, ու
միւս կողմանէ ամուսնական ժամանակն ա՛յն
տարիքին կը ձգէ՝ ուր մարմնական կարողու-
թիւնք կը սկսին արդէն նուազիլ : Այս տե-
սակէտով. Եւրոպական ընկերութիւնք մենէ
եռք են արդէն ու մենք ետ ենք գաւառեւե-
րէն, որոնց ամուսնութիւնք ըստ բաղձալոյն
անհասարակ երիտասարդութեան ու մերթ իսկ
պատանեկութեան մէջ կը կատարուին եւ հետ-
զնեալէ կ'ամրապնդուին, մինչ մայրաքաղա-
քիս մէջ այր մարդուն համար քառասունէն
ու կնոջ համար երեսունէն վար ամուսնու-
թիւնք հազուադէպ են ալ այժմ (ըսե՞նք տա-
այժմ) : Ու այն բառական ապագաման ա-
մուսնութիւնք բոլորն ալ սիրահարութեան հե-
տեանք չեն. այր մը հոս հինգ հարիւր ու-
կիին հետ կ'ամուսնանայ, ուրիշ մը հոն հինգ
հազար ուկիին հետ : Ուրեմն պատահական
եւ առեւտրական, արձակունակ եւ արական-

տունակ միութիւններ ըլլալ կը ճգտին մեր մէջ
ամուսնութիւնք , որոնք բնախօսական եւ բա-
րոյական աննպաստ պայմաններու մէջ կը կա-
տարուին ա՛յն թեթեւութեամբ որով ասորեայ
հասարակ գործ մը կը կատարենք : Տարուին
կարգացողներն անամնական ընկերութեանց
վրայ պարզապէս հիացմամբ կը համակուին .
արուն էգը կը փնտռէ եւ էգն արուն — եւ
իրարու հաճոյանալու ջանքը կ'ազնուացնէ
սեւը, — մինչ այլը զրամօժիտը կը փնտռէ եւ
կինը խոհարարն ու սպասուհին , սալօնն ու
թխանօն , մինչեւ ֆռագով վաշերներն ու պոլին
ու մուշը :

Տակաւին գաւառաց մէջ երիտասարդին
(քանզի՜ ըսինք՝ գաւառացիք երիտասարդ կ'ա-
մուսնանան) աչքն ու յօնքն , այտերն ու ակ-
ռաները , լանջքն ու թեւերը . . . նկատելի
կեանք են : Մայրաքաղաքացի տղիկը (տարի-
քով կին արդէն) կը նախընտրէ կեղծ ատամ-
ներն ու ծամերն եւ որ ի կարգին . իր փրնա-
ռածն , որպէս եւ . . . երբ կամ չորիտասար-
դին փնտռածն , ազագային գաւառական
զրականութեան արտադրած վէպերուն մէջ
— որոնք արդէն սկսած են փթթիլ — անտա-
րակոյս պիտի յիշուին իրեւ հոն ալ ա՛յլ եւս
սովորական դարձած բաներ : Գաւառացի ըն-
տանիքներու բնականոն վիճակն ալ ա՛յն պիտի
ըլլայ արամաբանօրէն ինչ որ է մայրաքաղա-
քացիինն՝ արդէն բաւական ժամանակէ՜ հետէ :
Սոյն բնականոն վիճակէն մինչեւ . . . զե-
րականոն վիճակն հեռաւորութիւնը մեծ չէ ,
Հա՛րկ է բացատրել թէ գերախանութիւնն
ա՛յն է , ուր կը սկսին ապահարզանք , սեւի
հասկնալի բառով ամուսնաթողութիւնք : Գա-
րունն անցած է , ամառն ալ , աշունն է որ
կը հասնի . տեքեւածա՛փն է որ կը սկսի , կը
թափթփի , կը քրքրի , կը ցրուի ընտանիքը .
այլը մէկ կողմ , կինը մէկ կողմ , գաւաղը կամ
զաւակները միւս կողմ , Քանի՜ս , առա՛ղ . . .
մտիկ բրի ես կիներ , որոնք աչք յարասաւս
ու կուրծքերնուն վրայ չը գիտեմ իրենց քա-
նիկորդ տարիածալին (որ ոչ նուազ յանցա-
ւոր է) սիրատումը , կը պատմէին ինձ իրենց
ամուսնաթողութեան սրտճառներն ու պա-
րագաները : Եւ . . . «ապագային զրակա-
նութենէն» առաջ չունի՞նք արդէն մենք ա-

մուսնաթողական արդէն սպառնալի գրա-
կանութիւն մի : Բանաւորական ուղղութենէ
մը զուրկ մեր մտաւորական զարգացումը
նպաստեց հայ ընտանիքին այս հակաբնա-
կան կամ հակընկերական վիճակին արտադրու-
ման , զոր ընկերային բարոյականի եւ ո եւ է
տեսակէտով ոչ ոք պիտի վարանի բացարձա-
կապէս դատաստարտել : Գաղղիերէն գիտցողը
(բառն անձուկ նշանակութեամբ պէտք է առ-
նուլ) Պոլսոյ այլեւայլ թաղերէն Բերա վագեց
չարաթ գիշերներն . երկուշաբթի իրիկուն
գրպանը պարապ տուն վերադարձաւ՝ դեղ-
նած , դողդոջ , դժկամակ , ու զժգո՛հ այլ
եւս իր ծնողացմէն , իր բնակարանէն , իր
թաղէն . պաղեցաւ իր տան պարտեզէն՝ որոյ
մշակումը դնդերները կը զօրացնէր եւ Աստու-
ծոյ տունէն որուն երգեցողութիւնն՝ իր հոգին
նա որ ստակ կ'աւելցնէր , պարտք ըրաւ .
մօրմէն քաշեց , քրոջմէն քաշեց , դրացու-
հիէն քաշեց . պարտքը դիզուեցաւ , վարկը
պակսեցաւ , ասողութիւնը խանգարեցաւ ,
տարիքը առաւ տկարացաւ (ցա՛ւ ու ցա՛ւ) :
Հիմայ . . . փարայով աղջիկ կը փնտռէ որ
պարտքերը հատուցանէ եւ իր ընտանիքը՝
բարեպտուղ զաւակ՝ մօսիթի վրայ նստեցնե-
լէն ետքն՝ ուրիշի մը տունն ալ կործանէ :
Հինգ-վեց ոսկի ամսականաւ ո եւ է պաշտօն
մը վարող երիտասարդներ , յաւէտ կամ նուազ
կարեւոր զբաղակալութիւնով գործ մը դարձնող
միջակորեարն ու մեծ զբաղակալութեամբ ու-
րոնք մեր բարձր դասակարգը կը կազմեն ,
նո՛յն ընկերային ու բարոյական մակարդակն
ունին այսօր : Անտարակոյս սոյն մակարդակն
ունի անհաւասարութիւններ : Կան որոնք
կ'ընդգլխանան հոսանքին , տահմային հին
աւանդութեանց կը փարին , եւ ողջամիտ մար-
դասէր ընկերաբաններէ կը քաջաւերուին : Սա-
կայն Եւրոպական ընկերութեանց ընթացքը՝
որոնց կը հետեւինք անխուսափելի կերպիւ՝
յոսադրական չէ՝ բարէ՜ մեզ համար . այդ
ընթացքը դէպ ի նահապետական ողջպահիկ
բարոյիկ վիճակը չէ . ընդհակառակն : Չը դի-
տեմ թէ Գաղղիոյ կամ Եւրոպական ո եւ է
քաղաքակրթեալ երկրի մը մէջ կատակերգու-
թեան պատմութիւն մը գրուեցա՞ւ : Հոն պիտի
հետեւէր մարդ քայլ առ քայլ ընտանեկան

կամ ընկերական բարոյականին տնկման : Բարիքեան վերջին կատարելագոյնն ինքն էր ստնտուի խնդիրն , որուն կնճիռներն ամուսնութենէ կը պաղեցնէ մարդս՝ նուազեցնելով միւս կողմանէ ժողովրդեան թիւն , ստնտուի յանձնուած մանկանց մէկ կարեւոր մասին վաղահաս մահուամբ : Ժան-Ժաք Ռուսօն , որուն ընարուզիս պերճախօսութիւնն յուզեց իր ժամանակակից մայրերն , անտարբեր պիտի լիզուէր դարաւերջի կամ նոր դարասկզբի մայրերն , — սրանց արդէն դաստիարակութեան գրքերը գրքտան վերին աստիճանին վրայ եւ՝ թուղթերը չկարուած :

Հայ ընտանեաց սոյն անդարմանելի (մաղթենք որ պատճառ տնենամ ժամանակէ մի բառս ետ առնուէ) անկումը կը փոխարինուի քանի մի բաներով , քանի մի կարեւոր ընտանեկան բարեկարգութիւններով : Ընտանեաց մէջ ընդհանրապէս այսօր գոտ հայերէն կը խօսուի՝ արտասանութեան փափկացմամբ , առանց հասկցուելու կարդացուող գրարար քանի մի կրօնական գրքերու կամ միակ գրքի տեղ՝ հասկնալի ընթերցումներ կ'ըլլան . երաժշտութիւնն՝ (1) այնքան հրահանգիչ՝ ընտանեկան նախասիրեալ զրօսանք մը կը դառնայ . ծեծով կրթութիւնը տեղի տուաւ կամ կու տայ՝ խօսքով (եթէ ոչ օրինակով միշտ) կրթութեան . կրօնական վիճաբանութիւնք , սրանք կրօնական աններողութիւն կ'արտագ-

րէին կամ անոր արդիւնքն էին , հակառակ կը համարուին այժմ բարեկրթութեան . սուգը չափազանցութեան չը տարուիր՝ բայց միայն արտաքին (իրաւ է՝ ոչ յոյժ երկարատեւ) յարգուգարդի մէջ . պահքի տեղ բուն ժուժկալութիւնը — ընական ու բարոյական — բըռնելու կը ձգտի :

Բաներորդ դարուն սկիզբն ահա մեր ընտանեկան վիճակը վեր ի վերոյ տեսութեամբ : Սրբազան Հայրապետն էր որ գրեց Դրախճի ընթանիքը , զոր չկրցայ կարգաւ , Կարապետ Իսթիւճեան ալ թարգմանեց Էքզօս Մալյի Ընթանեզուրկը : Բուն դրախտային ընտանիքն եղջերուաքաղ մըն է այլ եւս . ընտանիքի բացարձակ քայքայումէն ալ հեռու եւք տակաւին : Միջին բանաւոր վիճակի մէջ կայք մը բազմալի՛ էր : Բարոյական վէպեր ու պատմութիւններ լեբեւս նպաստէին ընտանեաց վերակազմութեան : Իսկ վա՛յ անոր որ ընտանեզուրկ մնայ . որ , եթէ ամուրի , ծնողացմէն զրկուի , եւ եթէ ամուսնացեալ , կուզակիցէն բաժնուի : Ամուսնացելոց ընկերութիւնն , որ քիչ կամ չառ կը վայելէ կեանքի բարիքներն , այդ վայելից իրաւունքն ընտանեզուրկին կը զլանայ կոր , ճիշդ որպէս անուանական ընկերութեանց մէջ . մերթ աւելի՛ գէշ : Ահ , մարդասէր զրիշներու , մարդասէր մեծատուններու համար մեծ գործ մը կայ կատարելու մարդկային ընկերութեան մէջ , Ինքրզինքն Արարչութեան գլուխ-գործոցը համարող մարդ էակին պատմութիւնը կը պարտէ՞ր ընական պատմութենէն աւելի շահեկան ըլլալ ամէն մասամբ :

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

(1) Երաժշտութիւն ըսելով անպատճառ դաշնակ չեմ իմանար , ու կատարելապէս համաթիտ եմ Մէրտէսին , որ կը պախարակէ միջին դասերու մէջ ճարակած բազմաթիւ գաշնակամուրները :

Կայս. գեաղատում . — Նախորդ չարթուն Մախիւր մամուլին յանձնուած էր արդէն , երբ ուրբաթ օրուան Պաշտօնականներուն մէջ ծանուցուեցաւ թէ՛ վեհ. Սուլթանը բարեհաճած է Լիւգաթի տնի չքաղրամ շնորհել Վսեմ . Գարիբէյ Էֆէնտի Նորատունկեանի , իրաւագէտ խորհրդական Բ. Դրան : Կը շնորհաւորենք , մեր կարգին , Նորատունկեան Էֆէնտին՝ կայսերական այս բարձր գնահատման արժանանալուն առթիւ , որ գոհունակութիւն կը պատճառէ թէ՛ պետական եւ թէ՛

ազգային շրջանակներու մէջ , ինչպէս նաեւ մասնաւորապէս զինքը մօտէն ճանչցողներուն :

Պատրիարքարանի նորոգութիւնը աւարտելու վրայ է եւ կահաստման գործն ալ առաջ կը տարուի փութով . Զատիկի ընդունելութեանց օրը , երկուշաբթի , ներկայանալի վիճակի մը մէջ զրուելու համար Պատրիարքարանը , Գրիգոր Էֆ. Կիւմիւշկէրտան , որ յատկապէս հոգ տարած է այս գործին , ամէն բան վայելուչ ճաշակով կը տնօրինէ Ս. Պատրիարք Հօր հետ :

Կ Ի Ն Ե Ր Ո Ւ Բ Ա Ժ Ի Ն Ը

Ազնիւ բարեկամ,

Ինչ սիրուն և անակնկալ . . . դաս: «Թե ինչո՞ւ չեմ ամուսնանաւ» իս պատասխանն առի երեկ — «Թե ինչո՞ւ կուզեմ ամուսին» զոր . . . Օրիորդ Յովինէ դրկեր է ինծի: Գնահատում և գովեստներէ աւելի սիրեցի ես այս շողշողուն ապտակը զոր աղջկան մը փափուկ մատները կուղղեն մեր ազնուաշուք սեռին . . . Իր խիզախ ու խայթող որակականներն այնքան փայլուն և ինքնեկ յանգերով կը շրջանակէ որ ամէն յանդգնութիւն կը ներեմ իրեն: Հրատարակէ զայն Մասիսին մեջ — քերես ապահովես քեզի Օր. Յովինէի աշխատակցութիւնն որ այնքան ինքնատիպ ու դարա . . . սկիզբիկ ըլլալ կը խոստանայ . . .

Բերա, 26 Մարտ 1901

Քոյդ
ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Թ Է Ք Ն Զ Ո Ւ Կ Ո Ւ Զ Ե Ս Ա Մ Ո Ւ Ս Ի Ն . . .

Առ Ա. Փ.

Դպրոցէն ելած եմ . . . գրեթէ նոր .
Առած քիչ մ'ուսման, հմտութեան պաշար .
Սւ արդէն կ'ըսեն քե . . . գեղաւերնորհ
եմ. քե ակուանեսս եմ . . . մարգարաւար .
Թե ունիմ հրկուն, բարեձեւ հասակ . . .
Թե ինձ պիտի շա՛ս վայլէ ֆողն հարսին,
Հակսիք՝ հարիւնջի ծաղկաճիւս պըսակ . . .
— Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Անձնապաշտութիւնն — ա՛խս դարավերջիկ —
Վարակած է սիրս, հոգի՛ս բովանդակ .
Ո՛ւր եր ուր ցըման ապրէի աղջիկ . . .
Ամուսնութիւնն է երկարէ՛ վանդակ
Ուր, գիտեմ, պիտի նեղուիմ չարաչար,
Բայց ծընողս հարուստ չեն, եւ երբ պակսին՝
Փողոցը մընալ բընաւ չե՛մ տեսչար . . .
— Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Երկու հաս եղբայր ունիմ: Մորի չեն .
— Մին փասաբանցու, միւսն ալ գրագիր —
Շատ կը սիրեն զիս եւ մեր տան մեջէն
Հեռանալս այսօր բնա՛ւ չեն փափաքիր .
Բայց վաղն, երբ փրչէ մի սիրաշունչ հով,
Երբան կին առնեն Սօֆին կամ Լիւսին,
Ըսե՛ք, որո՞ւ հետ ապրիմ, եւ ինչո՞վ . . .
— Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Ա՛հ, պարծանք ու փա՛ռք է կրնոջ համար
Աշխատիլն՝ անկախ, գոհ, ուրախ սրտի .
Բայց, աւա՛ղ, մարդիկ անգուք եւ յիմար,

Մեզ չեն ընծայեր մեծարանք , պատիւ . . .
Կինն որ կը շահի իր հացն եւ ապրուս
Կասկածներ կու տայ մեկուն կամ միւսին ,
Իր մահուր անուան կ'սպառնայ կորուս . . .
—Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Եւ յետոյ . . . անոնք որ մընան աղջիկ
Կեանքին մուր ճամբէն կ'անցնին գլխիկոր . . .
Տենդերով լի՛ է անոնց գիրգ լանջիկ . . .
Ինչո՞ւ չ'արքեման անոնք , գէթ մէկ օր . . .
Եւ ինչո՞ւ ծառոց ներքեւ , փոյկ փոյ ,
Զոյգեր կըրթընած իրարու ուսին ,
Զը պաշտեն գիրար լըռի՛ն հեշտանփով . . .
—Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Անկիրք , անպատկառ , հեզոնոս , ցի՛ց պեխեր ,
Մարդիկ որ այնքան կոշտ ու քերել են ,
Որ առանց շահի քա՛յլ մը չեն փոխեր ,
Սոնփալով կու գան միշտ մեր ետեւէն . . .
Կին ենք , եւ անգոր ու անօգնական ,
Պահապան շուն մը չառնե՛նք միասին
Երբ մեր շուրջ դարձող նօթի գալիք կան . . .
—Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Անախորժ բաներ չե՞ն հարսին համար՝
Տան , ծառաներու հոգերուն հետ սուր ,
Վարել խոհասան գործերն անհամար
Եւ գոն քողով մի . . . քաջառողջ կեսուր :
. . . Ափսո՛ս որ կեանք չէ կեանքն անփառունակ
Զիրքերո՛վ միայն օժտեալ բարձ կուսին
Որ գիտէ ժպիլ եւ . . . անել դաշնակ . . .
—Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Կանայք՝ լոյսեր են . մարդիկ . . . աշտանա՛կ .
Երբոր չենք երթար մայրապետաց վանք ,
Պերճանքի կարօտ , փայլի՛ ընդունակ ,
Պե՛տք է որ հագուինք , շքու՛նք , երեւա՛նք .
Ցուցադրենք փեսուր , ժանեակ , հովանա՛ր ,
Խրքորսի՛ւնն հանենք ազնիւ սնդուսին ,
Ունենանք մարգրիտ , ադամա՛նդ , գոհա՛ր . . .
—Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

Մենք ալ մարդո՛ց շատ յարգանք չենք տալեր . . .
— Հարիւրէն՝ հազի՛ւ հա՛ս մը կայ բարի ,
Որ զգայ արտին մեջ սուրբ սիրոյ կայծեր
Եւ քաղցր — աղփաթիկ — աղջկան մը փարի . . .

Անհառ , գրռեհիկ , կամ խալթող վա՛ս իժ ,
Ըզգացումներով , վարժով բիրճ ու սին ,
Պե՛տք է որ զսնեն արժանի պասիժ . . .
— Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

. . . Որպէս զի — ես որ անխիղն ու չար չեմ —
Իմ կնոջական կամֆիս հրպասակ ,
Ապսակեմ , ծեծեմ , հոգւովը սանջեմ ,
Փե՛ստեմ ու քանդեմ՝ քնայներուս քակ
Էրիկմարդ կոչուած քոչո՛ւնը վայրի . . .
Որպէս զի յաղթեմ անոր բիրճ ԵՍին . . .
— Ու չը մընամ ալ անո՛ք եւ այրի . . . —
— Ահա՛ քե ինչու կուզեմ ամուսին :

ՅՈՒՐՆԷ

Լ Ե Զ Ո Ւ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

→ ԶԱՆԳ ←

Ա Ղ Ս Ի Ա Ղ Ե Ս Լ Բ Ա Ռ Ե Ր

Բ.

Այս քանի մը լեզուաբանական խորհրդա-
ծութիւնները ընելու թեւադրուեցայ կարդա-
լով Մանսիւի առջի շարթուան հրատարակած
մէկ յօդուածը , որուն յարգելի հեղինակը
«Վաղուան Գրականութեան» առթիւ յուշուած
խնդրոյն վրայ բազմակողմանի տեսութիւն մը
պարզելու ատեն խօսելով Պոլսահայ գրակա-
նութեան վրայ , կ'ըսէր թէ , ան «ո՛չ միայն
իր բառգրքին պարապները , զորս օտար բա-
ռեր գրուած էին , լեցուց գրարարին հարա-
զաս , անեղծ (*) ձեւերով , այլ եւ ունեցած
բնիկ՝ այլ կոտորոյ , աղաւաղ (*) բառերուն
տեղ ալ վերահաստատեց անոնց հին կանո-
նաւոր (*) ձեւերը որք ամէն հայ եկեղեցիներ-
րուն մէջ կը լսուին նոյնութեամբ» :

Պոլսահայ բարբառին կամ աշխարհաբարին
մէջ պակասած բառերուն տեղը լեցնել գրա-
բարին բառերովն ու ձեւերովը , ա՛յնպիսի
անհրաժեշտ պահանջ մըն էր որ մեր առաջին
աշխարհաբար գրողները չէին կրնար տարբեր

րան մը ընել , բայց նոյնը չէ Պոլսահայ բար-
բառին աղմաս կամ կոտորոյ բառերը գրա-
բարին հին եւ իբր թէ անեղծ , կանոնաւոր
ձեւերուն հետ փոխանակելու պարագան :
Նախ թէ անեղծ կամ կանոնաւոր ձեւ ըս-
ուածը չենք կրնար ըմբռնել այն բոլոր պատ-
ճառներով՝ զորս վերը բացատրեցինք , որովհե-
տեւ ո՛չ մէկ րան մեզ կը վստահեցնէ թէ
այս ինչ նոր ձեւը կանոնաւոր չէ ա՛յնքան՝
որքան անոր հին ձեւը , կամ թէ հակառակը՝
նուազ անկանոն է՝ քան միւսը : Ու յետոյ՝
չենք կարծեր որ այս փոխանակութիւնը
տրամաբանութեամբ մը , բանաւորապէս կա-
տարուած ըլլայ : Ըստ իս՝ միաստութիւն է
հաւատալ թէ ժողովրդական բարբառին աշ-
կերտ(2) , հար , մար , ախարար , ձուռ եւայլն

(2) Արդի գրաւոր հայերէնը աշկերտին աշակերտէն տար-
բեր առում մը տուած է . առաջինը կը նշանակէ արհեստի
աշկերտ (չըրտիս) , երկրորդը՝ դպրոցի , ուսմանց աշակերտ :
Ձեւի եւ իմաստի նմանօրինակ եղանակաւորումներ կը
ներկայացնեն վասակիչ եւ վատակիչ , սորվիչ եւ սովորիչ
փոխանորդ եւ փոխանորդ եւայլն , որոնք էտպէս միեւնոյն
բառերն ըլլալով հանգերձ իրարմէ տարբեր նշանակութիւն-
ներ առած են :

(1) Մեր կողմէ ստորագծուած :

ձեւերուն տեղ հին աշակերտ, հայր, մայր, եղբայր, ձիւն եւայլն ձեւերը վերականգնա- նացնելով աշխարհարարին կոման կամ գեղեցկացման նպատակով է, եւ ենթադրելով թէ նպատակած է, հակառական չէ՞ միթէ մէկ կողմէ հար, մար, աշխերտ եւայլն ձեւե- րը մերժել իրրեւ աղաւաղեալ եւ միւս կողմէ նմանօրինակ ո՛չ նուաղ աղաւաղ մտնել (= մտանել), աղ (= ալ), ըղղաղ (= եղա նիլ), իյնաղ (= անկանիլ) եւայլն ձեւերը պահել եւ գրականացնել ինչ որ կատարուած իրողութիւն մըն է: Եթէ առաջինները աղ- ճատ ձեւեր են, վերջինները նոյնքան եւ աւելի աղճատ չեն միթէ: Ինչ բանաւոր պատճառ կարելի է ցոյց տալ մէկուն ընդուն ունելուն եւ միւսին մերժուելուն . . . :

Ըսել չենք ուզեր անշուշտ թէ սամկօրէնին բոլոր ձեւերը պահուելու էին, ո՛չ ալ բոլորու- վին գաւառական բառերով ու ոճերով գրա- կանութիւն մը ընելու ձգտողներէն ենք, որպիսի ձգտում մը կ'ուզուի վերագրել գա-ւառացի գրագէտներուն: Բնա՛ւ մտքէ ան- ցուցած չենք դո՞ր կերթաւով, ճախընայով, լեծօնով նոր գրաւոր հայերէն մը մէջտեղ բերել, թէեւ ասով ըղղաղով, իյնաղով, իզմեով, աւիկաով, աճիկաով Պոլսահայ գրաւոր աշխարհարարը շինողներէն տարբեր բան մը ըրած պիտի չըլլայինք: Գիտենք թէ գրականութիւն մը, լեզու մը ասոր անոր սի- րած ուղղութեամբ, ասոր անոր քմացը հա- մաձայն ճամբով մը չէ որ կը կազմակերպուի ու կը զարգանայ. ու մանաւանդ դիտած ենք թէ լեզուի մը, գրականութեան մը կազմութեան մէջ խիստ շատ անգամ բանա-ւոր եւ արամարտական ընտրողութիւնը չէ որ գործ ունի: Ինչքան անիմաստ, սխալ ձեւեր կան որ գրականացեր են այսօր, լայց այդ պատճառաւ անոնցմէ ո՛չ մէկը կրնանք արհամարհելի նկատել: Պոլսահայ գրաւոր լեզուն, ինչ կերպով ալ կազմուած ըլլայ ան, սրտանց սիրողներէն ենք ու մենք իսկ այն լեզուով կը գրենք. լայց ինչ որ առանց յա-ւակնութեան դիտել կու տանք, սա է թէ կարելի է այդ լեզուն ճոխացնել գաւառական լաւ տարրերով ալ: Զգե՛լ պէտք է ա՛լ սա կոյր արհամարհանքը ժողովրդային լեզուին

դէմ, անիմաստ նախադիմանքներ են անոր երեսին նետուած աղճատ, աղաւաղեալ եւլն. մակդիրները, եւ նոյնքան անիմաստ լաւա- տեսութիւն մըն է գրաւորին բոլոր ձեւերը կանոնաւոր, հարաւատ, անեղծ համարելը: Ահա՛ ինչ որ ըսել կ'ուզէինք:

Ինչ որ ալ ըսեն, չի կրնար ուրացուիլ գաւառական լեզուներու մատուցանելիք օգ- նութիւնը մեր արդի գրաւոր հայերէնին: Գաւառական լեզուներու ուշադրութիւն դար- ձուելէն ի վեր արդէն այդ օգնութիւնը ար- ղեամբ վայելել սկսած է Պոլսահայ գրակա- նութիւնը. զոր օրինակ՝ Պոլսահայ աշխարհ- հարարը ունէ՞ր բաւ մը որ աւուրչիւն տեղը բռնէր եւ գէ՞ջ ըրաւ իր մէջ ընդունելով գա-ւառական այդ ձեւը զոր գրականացուց Սրամ Անտոնեան իր Գրական Աւուրչիւններով: Դեռ տաճնակներով կրնամ՝ յիշել այս կարգի գրականացած գաւառական գեղեցիկ բառեր: Գաւառարարբառներու ուսումնասիրութիւն- ները, — որոնք մասնագիտական աշխատու- թիւններ ըլլալով հանդերձ գրականութեան մաս կազմել չեն դադրիր, քանի որ ինչպէս կ'ուզուի հաստատել, գրականութիւնը բազ- մաճիւլ է եւ լսի արուեստին մէջ չի սահմանա- փակուիր, — իրենց լեզուարանական արժէքէն զատ այս տեսակէտով ալ կարեւորութիւն մը ունին, քանզի երեւան կը հանեն բազ- մաթիւ ընտիր եւ արտայայտիչ բնիկ բառեր ու ոճեր որոնցմէ զուրկ է արդի Պոլսահայ գրականութիւնը, եւ կամ որոնց տեղը ստիպ- ուած է լեցնել հնարած ոչ ձեւերով:

Իսկ գալով այն կարգ մը գաւառացի չիտացած աղոց որոնք գաւառական գրակա- նութեան անուան տակ ամէն տեսակ ան- համութիւններ գրեցին, յարգելի յօդուա- ծագրին դիտել կու տանք թէ իրմէ առաջ ար- գէն անոնց դէմ առաջին բողբոքի ձայն բարձ- րացնողը եղած է բուն իսկ գաւառացի գրա- գէտներու այն ողջամիտ մասը՝ որ գաւառա- կան գրականութեան բանաձեւողը եղած է եւ զայն ըմբռնած իր ճիշտ դերին մէջ: Այս տո- ղերը գրողն իսկ մէկէ աւելի անգամներ ու նոյն իսկ այս էջերուն մէջ անդրադարձած է այդ խնդրոյն (Տե՛ս Մարիս 1900 թիւ 3 «Գա-ւառական գրականութեան արդի վիճակը»):

ՅՈՒՂ, ԳՍՁԱՆՃԵԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ(*)

ԲԵՌՈՐԴԻՈՅՍ

Բարե՛ւ, պեպե՛, որքա՛ն աղուո՛ր ես այս առսու՛ :

Պաշիկ մը, պաշիկ մը ես ես՝

Հիմա՛, վար ա՛ռ քաթիկներդ եւ մսիկ քե՛ մօքարիդ :

Հազիւ երեք տոսու ես, սակաւին անուն մը իսկ չունիս, քեզ մարդու տեղ կը դնեմ, տե՛ս, եւ կու գամ հետդ խօսակցիլ :

Ուրիշներ, քերեւս, խնդան վրաս, որո՞ւ հոգ, բաւական է որ դուն կը ժպտիս եւ այդ պէս արհայուքեան վրայ գաղափար մը կուտաս ինձի, իմ աղուո՛ր պեպե՛ս, շօշափելի հեշտակս :

Վերջին պաշիկ մըն ալ, օ՛խ . . . սիրեմ :

Կեանքը կարճ է եւ անակնկալներով լեցուն, ուսի մարդահամարի տեսակէն անունս սրբուելէ առաջ՝ պարսկականութիւն կը զգամ քեզի տալ իսկ մը խրատներ որոնցմէ կ'ընաս օգտուիլ քանի մը տարի վերջը :

Նախ, խրատս ըլլայ քեզի, երբեք քող մի՛ տար որ հինգ կամ վեց տարու եղած ասեմդ, ծնողդ սալօնին մէջտեղ քաշեն զքեզ եւ հիւրերու ներկայութեան սիւսկէն որ դարոցը մասնագէշին սորվեցուցած կապանդի *ֆօնքի-մանդ* եւ կամ . . . *Հայունին առակը* արտաւանդ քոքով լեզուովդ :

Բան մըն ալ կայ, չի մոռնամ :

Երբ սպասուհին գայ դրան առջեւ կայնի եւ հրաւիրէ զքեզ երթալ պառկելու, չըլլայ որ մամաին խօսքին հնազանդելու համար սալօնին շրջանը ընես՝ հիւրերուն ձեռքը մէկիկ մէկիկ սեղմելով :

Տ ֆոլոցին մէջ շնորհով քալէ, պարկե՛տ շարժուածք մը ունեցիր, աչքերդ պատահաններուն վրայ մի՛ պսքսցներ, մի՛տ առ-

ջիդ նայէ . . . կարելի է գետնէն բան մը կը գտնես :

Տ Յանախան մարդիկդ նայէ՛ որ քենէ մեծ ըլլան եւ կիները . . . քենէ պզտիկ :

Տ Մի՛ երբար այն քատրոնները ուր միջնարարները երկայն են եւ . . . շրջագլխերը կարճ :

Տ Երբ սիրոյ ինչ ըլլալ կուգես գիտալ, օտարագլխի աղջկան մը հետ նախ սիրաբանէ, ետէն հայ աղջկան մը հետ ամուսնացիր, հոգ չէ :

Տ Երբ օրին մէկը, Աստուած չընէ, հայ գրագէտ ըլլալու փափաքը զգաս ներսիդիդ եւ կամ սիւսկիս խմբապիւր ըլլալու, գործի չսկսած անձնասպան եղիր, անպատեհ կը յաջողիս :

Տ Կեանքի մէջ յաջողելու համար, հոգիս, ոչ խելք պէտք է ոչ ուսմունք, *toupet* ունեցիր, անագի՛ն *toupet* : Սիրոյ մէջ ալ այսպէս է :

Տ Երբ Քրիստոսի ըսածին պէս միմիայն երկու շապիկ ունենաս, մէկ հասք դուն հագիր եւ միւսն ալ . . . լուալու դրկէ :

Տ Երբ անգլիացի օրիորդի մը համար միս ըսեն, մի՛ հաւատար . . . ամբողջ ոսկոր է :

Տ Դերմաններու հետ զարեւուր խմէ, Ֆրանսուհիներու հետ սիրաբանէ, Անգլիացիներուն հետ գործ ունեցիր, Հրեաներու բարեկամութեանը մի՛ վստահիր, Մալթայցիներու հետ մի՛ համբողջեր, Կեսարացիներու հետ վիճաբանելէ զուշացիր, Արաբկերցիներէն միմեկ հաց առ, Իտալուհիներուն հետ տեսնուէ կէս գիշերէն ետք եւ Յոյներուն հետ . . . մուրը չի կոխած :

Տ Շատ անգամ կիները «չէ» կըսեն, մի՛ վիստար. անոնց երկու «չէ»ն մէկ «այո» կը նշանակէ :

Տ Հաւատարմութիւն բառը ամական մըն է զոր կիներու համար գործածելդ առաջ, քան անգամ, հարիւր անգամ մտածէ :

Տ Երբ աղբաս աղջկան մը հետ ամուսնանաս, նայէ՛ որ առողջ ըլլայ, իսկ երբ հարուստի մը աղջիկը պիտի առնես, նայէ՛ որ աներդ եւ զոհանջդ քոֆախտէ վարակուած ըլլան : Նպասակիդ շուտ հասնելու միակ միջոցն է այս :

(*) Դր. Խ. — «Քրիզանթէմ» որուն երկու սրամիտ յոգուածները այնքան ախորժակ կ'աղացուեցան յաջորդաբար Արեւելի եւ Արեւ. Մամուլի մէջ, զեղեցիկ անակնկալ մը կընէ Մասիսին՝ Նուրիկով իր աշխատակցոյ Յիւնը այս կարճ՝ բայց սիրուն գրուածքով «որուն կը լուսանք Թէ ուրիշներ ալ պիտի յաջորդեն» . . . Ֆիւզիկոս մեր գրականութեան այն միակ ճիւղը ըլլալով որ այնքան աւելի կը փրկաւորուի որքան հազուագիտ կերպով ու յաջողապէս մշակող գրիչներ ունինք, որոնց մէջ առաջին տեղը կը զբաղէ «Քրիզանթէմ» :

ՅԻՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

(1851 — 1901)

Դարը որ անցեալ եղաւ այլեւս . . . առանց կասկածի , թերեւս իր բոլոր նախորդներէն աւելի իրաւունք ունէր կոչուելու յառաջիկայութեան ու բարեշրջման դար մը , քանի որ վերջնապէս այս դարուն մէջն էր որ կը հաստատուէր նիւթերու եւ էակներու , գաղափարներու եւ գիտութիւններու բարեշրջման սկզբունքը՝ որ Տարվինի անունով հռչակուած՝ հակառակ կղերական ընդդիմութիւններու , գիտութեան մէջ կուգար իր տեղը գրաւել եւ իր վրայ կեդրոնացնել գիտունին ու գրագէտին , քաղաքագէտին ու պատմաբանին ուշադրութիւնը , առաջ բերելու համար դատաւորութիւն մը որ ժԹրդ դարուն եզրակացութիւնը եւ իսկութիւնը եղաւ կարծես :

Ամէն ինչ , ըլլան անոնք նիւթ կամ էակ , ըլլան գաղափար կամ համալում , վերջնապէս կը համարուէին բարեշրջեալը անցեալ նախնական ձեւի մը որ անշուշտ զեռ իր վերջնական ձեւը ստացած չէր եւ զեռ կրնար բարելոքուիլ : Ահա դատաւորութիւնը որ ծնունդ պիտի տար առաջգիմութեան մը որ ծագում պիտի առնէր անշուշտ՝ այս նորը եւ աւելի աղէկը ընդգրկելու գաղափարէն որ արմատացած էր քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ :

Եւ այս տեսակէտով՝ անցեալ դարը եւրոպական քաղաքակիրթութեան հետզհետէ աւելի բարեփոխման եւ ազնուացման համար մատուցած ծառայութիւններով այնքան անհամեմատ կերպով բարձր է իր նախորդներէն որքան որ բարձր է Բրիտանիոյ կրօնքը իր բոլոր նմանութիւններովը հանդերձ Պուտտայի կրօնքէն :

Այդ բարձրանալու հսկայ փոփոխութիւնը մէջ որոնք անցեալ դարուն սկիզբէն ծնունդ առած՝ ամբողջ եւրոպան զբաղեցուցին՝ աշուշտ լայն տեղ մը կը գրաւէին մտածումներու , գաղափարներու եւ սկզբունքներու լայնատե-

հսկայութիւն մը : Բայց այս զարգանալու , դատարարուելու եւ հմտանալու հակումը՝ մասնաւորապէս վերջին դարուն՝ մեր մէջ ծագում կ'առնէ 1850 թուականէն սկսեալ որ ընդարձակ առումով Թրքահայոց եւ մասնաւորապէս Պուտայի Հայերուն զարգացման նոր գարազլուխը կրնայ համարուիլ : 1850ը յիշատակելի թուական մըն է եւ պիտի մնայ :

Այդ թուականէն ծագում կ'առնէ մեր մէջ ճշմարտապէս աշխարհարար կամ ժողովուրդին գրականութիւնը եւ այդ թուականին է որ կանխապէս եղած նիւթական զհնդութիւնները իրենց արգիւնքը կուտան՝ կրթական տեսակէտով՝ Սկիւտարի ճեմարանին եւ Եւրոպայի համալսարաններուն մէջ դատարարակուած սերունդին ի յայտ բերած կարողութեամբ :

Այնպէս որ ստանց 1850-1865ի սերունդին , մեր մէջ շատ աւելի ուշ ժամանակներու պիտի իյնային այն ամէն մասնաւորական աշխատութիւնները որոնք կը միտէին , կը ձգտէին եւ կը հակէին առաջ բերելու ճշմարիտ զարգացում մը որ հեռանար խաւարամտութենէ :

Եւ այս առաջ չարթուան մէջ կը կարծես թէ չկայ աւելի պատշաճ բան մը քան ցոյց տալ կրօնքի գաղափարէն ծագում առած մուլեանդութեան միջնադարեան գաղափարին բարեփոխմը՝ ներդրածութեամբ՝ եւրոպական դատարարակութեան , երբ մանաւանդ նկատուեցան առնենք թէ ասկէ յիստին տարի առաջ պատահած դէպքի մը յիշատակութիւնն ալ կուգայ ըմբողջ այս օրերուն (1) :

1851 ժետարուար 21ին , ինչպէս ցոյց կուտայ այս տարուան Ընդարձակ Օրացոյցը , Պատրիարքարանի մէջ եկեղեցականներ , ա-

(1) Ծ. Խ. — Այս յօդուածը աւելի կանուխ յանձնուած էր մեզ , բայց հրատարակութիւնը յապաղում մը կրեց :

միրաներ, ուսումնականներ ժողով կը գումարեն քննելու համար թէ Շահնազարեան Կարապետ վարդապետը իրապէս Հայ. եկեղեցւոյ դաւանութեան հակառակ կարծիքներ յայտնած է :

Այսօր, 50 տարի յետոյ, մտածեցէք որ եթէ երբեք ասանկ իրողութեան մը ակնհաստեսները եղած ըլլայինք, ի՞նչ պիտի մտածէինք այսքան խաւարավիտ գաղափարի մը վրայ :

Ինչպէս ըսինք, 1850 թուականը դարագլուխ ըլլալու նախասահմանուած թուականն է, հինը եւ նորը իրարու քով երեւան կու գան այդ բաղդատութեան մէջ. եւ կը յիշեցնեն մեզ կրօնական վէճեր, որոնց մէջ պայքարող եւ կղերամու վիճառէրը՝ Տերոյենց (1800-1888) իր թուրքերէնի, լատիներէնի, հին յունարէնի, իտալերէնի, ֆրանսերէնի եւ հայկարանութեան — ինչպէս կ'ըսէին հիները — քաջահմուտ ըլլալու անխիտարինելի առաւելութեան միացուցած ծայրայեղ տններողութիւն մը՝ բոլոր իր ուշը կեդրոնացուցած էր իր գրչովը հարուածելու ամէն անոնք որոնք կղերական ոգւոյն դէմ ամենաչնչին ընդվզում մը ցոյց կու տային :

Եւ յաջոցներու համար իր յարձակումները ու կրօնական բանադրանքներու ենթարկելու համար իր ախոյեանները, այս հնօրեայ պատուելին իր տրամադրութեան ներքեւ ունեցած էր ազդեցիկ ազգայիններու եւ եկեղեցականներու համամտութիւնը որոնք թերեւս իր խորհրդով կը շարժէին : Այս մղեւառնդ ոգին շատ մը պայքարներ մղած է, որոնք անմոռանալի պիտի մնան, եւ միանգամայն իր ժամանակը պիտի ներկայացընեն՝ ներկայացնելով նաեւ իր անձը որ հակասութիւն մը եղած էր թէ՛ ինքն իր մէջ եւ թէ՛ իր ժամանակին հետ :

1849ին Նիկիոյայոս Զօրայեան Յիսուսի վարուցը հասնողոս պատմութիւնը անուն դասագիրք մը թարգմանած ըլլալուն համար, Մաթթէոս Զուրաճեան (1802-1865) նախկին Պատրիարքը (1844-1848) Օրթոդոքսի եկեղեցւոյն մէջ քարոզով մը դատապարտութեան կնիքը կու տայ այդ գրքին, փաստարանելով թէ Յիսուս հասարակ մահկանացու մը չէ որ ա-

նոր վարքը գրուի, եւ այս յայտարարութիւնը տեղի կու տայ խնդրոյ մը որուն լուծում կը տրուի Պատրիարքարանի մէջ գումարուած ժողովի մը առջեւ Զօրայոսն . . . լացնելով եւ գիրքին գործածութիւնը արգիլելով :

Եւ երեւակայել թէ այսքան խիստ մղեւառնդութեան ժամանակներու մէջ բարձր զարգացումով ու լուսավիտ գաղափարներով օժտուած վարդապետ մը յանկարծ երեւան ելլէր եւ գար ծիծաղիլ Զամուրճեանի մը ձափառութիւններուն վրայ : Ըսել կարծեմ աւելորդ է թէ այդ վարդապետն էր Կարապետ Շահնազարեան որ 1850 սեպտեմբերին կը հասնի Պոլիս :

Անշուշտ գուշակիլը դժուար չէ թէ այս հմուտ վարդապետը ժամանակին հմտագոյնը համարուած մարդուն՝ Տերոյենցին պիտի հանդիպէր Կ. Պոլսոյ մէջ, եւ թերեւս Տերոյենց նոյն իսկ զայն պիտի հալածէր իր գրչով, իր համարալին վրայ փառք մըն ալ աւելցնելու տենչով :

Եւ իրօք ալ չուշանար առիթը Շահնազարեանը կ'ենլու, Սկիւտարի մէջ Տերոյենց կրօնական խնդիրներու վրայ վէճեր ունենալով ուսումնական վարդապետին հետ, որոնց եզրակացութիւնը կ'ըլլայ Տերոյենցի սա ամբաստանութիւնը թէ «անհաւատութեան նշաններ տեսեր է» վարդապետին վրայ, ինչ որ կը յայտնէ ժամանակին ուսումնական եկեղեցականներէն Գուզլունճուքի քարոզիչ Սեթեան Յովհաննէս վրդի :

Բայց գիտէ՞ք ի՞նչ էր այս «անհաւատութեան նշաններ» ըսուածը, ի՞նչ էր Շահնազարեանի յանցանքը : — Ապահովապէս կրօնական դաւանալեաց դէմ ընդվզողներու կամ դաւանարանական խրթութեանց շուրջը պիտի թափուի ձեր միտքը որ չկրնար ընդունիլ թէ մարդ մը կրնայ անհաւատ համարուիլ դեւերու գոյութիւնը չընդունելով կամ ձէնովայի ձիգվիթներու վանքին մէջ իւր Բրիտանիոյ դաստառակը պահուած պատկերին ստուգութիւնը կատարած իտակ ձգելով՝ սա շատ բանաւոր առարկութեամբ թէ Անքօնայի, Հռոմի եւ Վիեննայի մէջ ալ նմանօրինակ փրկչական պատկերներ գոյութիւն ունին որոնց համար իւրաքանչիւր վանական միաբա-

նութիւնն կը պնդէ թէ ճշմարիտ դատաւար
իր ունեցածն է եւ միւսները կեղծ են :

Ահա՛ այն սուերեւոյթ պատճառները որոնց-
մով Շահնազարեան վրդ. կ'ամբաստանուէր
իր անհաւատ, բայց եթէ խորը պրպաել
ուզուի, ինչ որ Տերոյենցը եւ իր համախոհնե-
րը — մասնաւորապէս Մատթէոս Պատրիարքը
— կը կատրեցնէր եւ Շահնազարեանը ատելի
կ'ընէր, անոր Ղալաթիոյ եկեղեցիին մէջ խո-
սած քարոզներն էին որոնց մէջ իր ունեցած
հատութեամբը Հայ. եկեղեցին կը պաշտպանէր
ընդդէմ օտարադաւաններու ոտնձգութեանց .
որոնց ներկայացուցիչներն էին Մատթէոս
նախկին Պատրիարքը՝ քօղին ներքեւէն, եւ
Տերոյենց պատուելի՝ յայտնապէս :

Ասոնք այնպիսի պարագաներ են զորս յե-
տոյ ժամանակը լուսարանեց, երբ մանաւանդ
Մատթէոս իր կաթողիկոսութեան մէջ հրա-
տարակեց Դաշանց Թղթոյն ռադոքսեան
հասաւորութիւնը անուն գիրքը՝ հաստատելու
համար Դաշանց Թողթի մը գոյութիւնը ու-
րուն գլխաւոր հակառակորդն էր Շահնազար-
եան վարդապետ :

Բայց Շահնազարեան, իրր իր արժանա-
պատուութեան գիտակից եւ ճշմարտութեան
պաշտպան, անշուշտ չպիտի կարենար հան-
դուածիւ ամբաստանութեան մը որ մոլեռան-
դութեան այդ տարիներուն մէջ կը նետուէր
իր երեսին, ուստի կը պահանջէ՝ որ ժողով
կազմուի եւ իր բացատրութիւնները լսուին :

Եւ ահա այդ ժողովը կը կազմուի 1851
փետրուար 21ին ուր ամբաստանեալ վարդա-
պետը կ'արդարացնէ ինքզինքը եւ կը հռչակ-
ուի «Եկեղեցւոյ օրինաւոր, հաւատարիմ, կրօ-
նասէր վարդապետներէն մէկը», բայց ասով
խնդիրը չի գոցուիր, այլ ընդհակառակը նո-
րէն կ'արժարծի այնքան սաստկութեամբ ու-
րուն առաջը առնելու համար ազգին երեւե-
լիներ միջոց մը խորհիլ կ'ուզեն եւ 1851 ապ-
րիլ 20ին Տառեան Յովհաննէս ամիրա իր
ստանը կը հաւաքէ Յակոբ Պատրիարքը, Մատ-
թէոս նախկին Պատրիարքը, Յովհաննէս վար-
դապետ Սեթեանը, Բերայի Տ. Զաքարիան,
Սկիւտարի Տ. Յովհաննէսը, Խապիւղի Տ. Ե-
րեմիան, Ժամանակին ամիրաներուն մեծա-
մասնութիւնը եւ պատուելիներէն Դրիգոր

Միրզայեան (յետոյ Տ. Մարգար Իզմիրի), Յով-
սէփ Տ. Սահակեան եւ Գալուստ Տ. Պօղոս-
եան :

Այս ժողովին կը ներկայանան դարձեալ
ամբաստանող եւ ամբաստանեալ, Շահնա-
զարեան դարձեալ անպարտ կ'արձակուի շնոր-
հիւ Մկրտիչ Ճէզայրլիի, Պետրոս Խորատան-
ճեանի, Պօղոս Աշնանեանի, Մկրտիչ Մով-
ճեանի, Նիկողոս Հովիւեանի հովանաւորու-
թեան, որոնք զինքը կը պաշտպանեն Տերո-
յենցէն ներշնչուած խմբակին դէմ որուն
գլխաւորն էր միամիտ բայց ազդեցիկ մարդ
մը՝ Կարապետ Պալեան, Ժամանակին կո-
չումովը Խաչֆա ամիրան որ Շահնազար-
եանի անպարտ արձակուելէն սաստիկ կը զայ-
րանայ :

Բայց անշուշտ այսքան ծանրակշիւ հան-
գամանք առնող խնդիր մը չէր կրնար չու-
տով գոցուիլ, մանաւանդ որ Տերոյենց՝ իր
ձեռքին տակ ունէր լրագիր մը որուն միջո-
ցաւ անշուշտ պայքար պիտի մղէր Շահնա-
զարեանի դէմ : Եւ իրաւամբ ալ Տերոյենց
իր շարաթաթերթին եւ Շահնազարեան Արշա-
լոյսի մէջ Ումն ստորագրութեամբ երկար եւ
կծու յօդուածներ կը գրեն : Այս լրագրական
պայքարին մէջ թէ եւ Շահնազարեան՝ Կարա-
պետ Իսթիւճեանի օժանդակութեամբ յազմա-
կան կելլէ, բայց դեւերը «այս անգամ վասն
«ծովացեալ մեզաց մերոց» իրենց գոյութիւնը
ինքնին հաստատեցին, «վանզի զիրենք ու-
«րացողն իրենք հալածեցին մինչեւ տար աշ-
«խարհ եւ այս Շահնազարեան վարդապետը
«քաւեց իր այս ահաւոր մեղքը» (1) :

* * *

Բայց այս նոյն Շահնազարեան վարդա-
պետը հալածող ոգին՝ Տերոյենց՝ ինքն ալ
զերծ չի մնար Ժամանակին ազդեցութենէն եւ
թերեւս շատ աւելի մեծ իրաւամբ կը դատաւ-
արտուի 1856 յունուար 19ին Պատրիարքա-
րանի մէջ հաւաքուած Եկեղեցական ժողովէ
մը որ կը դատաւարաւ անոր Զօհալ շարա-
թաթերթը (1855-1857) իր պարունակած դա-
ւանարանական սխալ մեկնութեանցը համար :

Ասիկա արդեւք չրլար տակայն որ հազիւ

(1) Մատիւ Թիւ 3974, Նահագետ.

քանի մը տարի յետոյ դարձեալ ինքզինքը կրօնքի պաշտպան յայտարարէ, այնպէս որ ժամանակակից թերթի մը մէջ կը տեսնենք (1863) Երեւակ կրօնական շաբաթաթերթին յայտարարութիւնը ուր իւր թէ Տերայեցի «տեսնելով որ անհաւատութիւնը եւ անկրօնութիւնը սկսած է տարածիլ ազգին մէջ, իւր պաշտպան կրօնի եւ բարոյականութեան սկսած է իւր Երեւակ հանդէսը հրատարակել նոր դիրքով հին ոճով» :

Այս կրօնական վէճերը իրենց մեծ օգուտը կ'ունենան անուղղակի կերպով, նոր սերունդը կղերականութեան ազդեցութենէն իրկուելու ջանքերու մղելով ժամանակին զարգացած մարդկիւր : Այնպէս որ 1860-1865 ըրազրութիւնը երկու մասի կը բաժնուի որոնք մասնաւորապէս կղերականութեան թեր ու գէմ կը վիճարանին : Այս լրագրական պայքարներուն մէջ ազատութեամբ գլխաւոր դերը վերապահուած է Արմենակ Հայկունիի († 1866) որ Պէտքէի ամերիկեան վարժարանին մէջ դաստիարակուած գործունեայ եւ անկաշկանդ միտք մըն էր եւ որ արդէն 1857էն խմբագրական կեանքի մէջ մտած էր : 1862-1863 ին տասնորեայ Հանդէս մը կը հրատարակէ որով ջախջախիչ փաստերով եւ հստակութեամբ բայց քիչ մը սառնակ բացատրութիւններով չարաչար կերպով կը հարուածէ կղերականները եւ մասնաւորապէս ու գերագրապէս Չամուրճեան Տերայեցի պատուելին որուն գէմ հանուած ամբաստանութիւնները ահաւելի են գրեթէ :

Բայց ուրանալ պիտի ըլլար ճշմարտութիւնը եթէ այդ պայքարին մէջ Արմենակ Հայկունին միայնակ ցոյց տայինք, մինչդեռ իրեն գլխաւոր աջակից ունէր Կարապետ Փանոսեան՝ Մանգուսի խմբագիրը որուն կրօնային բարեօրոճանց վրայ գրած տետրակը Չայն կը թարգմանէ եւ որ ամբողջ ըստը մըն է եկեղեցական վարչութեան զեղծումներուն գէմ :

Մէկ կողմէն Արմենակ Հայկունի, միւս կողմէն Կարապետ Փանոսեան այնքան կը զօրանան որ Պատրիարքարանը կը ստիպուի դարման մը խորհիլ, ուստի Պօղոս Պատրիարք կը յանձնարարէ Խառփիլի քարոզիչ եւ Կրօնական Ժողովոյ ատենապետ Վարժապետեան

Ներսէս եպիսկոպոսին որ «Քրիստոսի Ս. Եկեղեցին եւ անոր հակառակորդները» անունով 26 երեսներէ բաղկացած տետրակ մը կը հրատարակէ որուն մէջ Փանոսեանը եւ Հայկունիին կը քննադատէ եւ անոնց կարծիքները կը հերքէ :

Արմենակ Հայկունի Չայնի մէջ իրեն վերաբերած մասերուն կծու պատասխան մը կու տայ, միւս կողմէն օրէ օր աւելի կը սրէ իր գրիչը ընդդէմ կղերական զեղծումներու որոնք իրենց գոյութիւնը աւելի ամուր կը պահէին այն ժամանակներուն մէջ ուր ամէն եկեղեցական սուրբ էր, ուր Երեւակի եւ Ժամանակի պէս կղերամիտ լրագիրներ կը հրատարակուէին :

Ճիշտ այս միջոցներուն է որ Կարապետ Փանոսեան դարձեալ կը հրատարակէ տետրակ մը ուր կը պայքարի Ներսէս եպիսկ. Վարժապետեանի դէմ, այդ կրօնական հարցին վրայ :

Բայց ասոնք կարծես անբաւական էին. Չայնը միւս կողմէ կը հրատարակէ անհաւատութեան, ամուսնութեան եւայլնի վրայ այնպիսի յօդուածներ որոնք կղերականներու — հետեւարար նաեւ Չամուրճեանի — ջիղերը ոտք հանելու հանգամանք ունէին :

Կրօնական Ժողովը դարձեալ կը գտնուիր, բայց անօգուտ փորձեր կ'ըլլան իր ջանքերը, վասն զի ոչ Փանոսեան, ոչ Հայկունի եւ ոչ ալ Սվաճեան — Մեղուի խմբագիրը — կրնայ լեւեցնել :

Մասնաւորապէս Հայկունի այնքան առաջ կ'երթայ որ 1864ին կը ձեռնարկէ իւր իր թերթին յաւելուած հրատարակել Գաղսնիք հայ կղերականութեան անուն գիրք մը որ անշուշտ հաշտ աչքով չպիտի նայուէր : Բայց ասոնցմէ վեր, ա՛լ աւելի մեծ յանդգնութիւն մը վերապահուած էր Հայկունիին, Էնէստ Ռենանի Վարժ Թիւրքիին թարգմանութիւնը որ 1864ին — ասկէ 36 տարի առաջ — թերեւս անհաւատութեանց մեծագոյնը եւ անբարձրութեանց ամէնէն սոսկալին էր : 1864 սեպտեմբեր 1ին Չայնի մէջ (թիւ 29) կ'երեւայ առաջարանին եւ յաջորդ թիւին մէջ առաջին գլուխին թարգմանութիւնը, որուն հանդէպ Պատրիարքարանը չուարած, իւր թէ գայթակ-

ղութեան մը առաջըր առնելու համար՝ 1864 սեպտեմբեր 22 թուականի Կոնգրէսով մը Պօղոս Պատրիարք ժողովուրդին ուղղուած յորդորական մը եւ խմբագիրներու ալ կէս մը բանադրանք կ'ուղղէ :

Արմենակ Հայկունի իր թերթին նոյն թիւին մէջ, ուր այս կոնգրէսը հրատարակած է, կը յայտարարէ թէ

Քաղաքական ժողովոյ պահանջման համար ստորագրութիւն տուինք յիշեալ ժողովոյն :

Ըստ պահանջման Ազգ. Քաղաքական ժողովոյ՝ կը փութաւ յայտնել քե ես իմ քերթիս 30րդ թուով «կիսեւրոս ազատագրութիւնը» վերնագրաւ հրատարակած յօդուածիս վրայ բացատրութիւն մը պիտի հրատարակեմ յայտնելու համար քե՝ նոյն յօդուածով իմ միտքս ըն ալ քրիստոնէութեան կամ պատկի խորհրդոյ դէմ խօսիլ չեմ, եւ քե շատ կը ցաւիմ որ յիշեալ յօդուածը իմ նպատակէս տարբեր կերպիւ հասկցուեր է, խնդիրը լաւ եւ անթերի բացատրած չը լինելուս պատճառաւ, եւ արդարեւ կը զղջամ այս պակասութեանս վրայ :

Ռեւանի թարգմանութիւնը որոշած եմ ալ եւ չհրատարակել

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

1870էն մինչեւ մեր օրերը Պատրիարքարանը այլեւս անհատներու գրուածներուն դէմ եկեղեցին պաշտպանելու հոգը մեծ մասամբ գրող եկեղեցականներու ձգած է :

Եւ այսօր առանց կրօնական գաղափարներու մասնաւոր հակում մը ունենալուս՝ այսինքն տիրացուութենէ շատ հեռացած չըլլալուս՝ գրեթէ մեծ մասամբ կտրատուած է մեր մէջէն մոլորականութիւնը շնորհիւ Պատրիարքարանի այդ չարժարժող ոգւոյն եւ նախորդ սերունդէն մինչեւ նորը փոխանցուած կրօնական լայն ըմբռնումներուն : Այսօր Ռեւանի տրուած գովեստ մը, ամուսնութիւնը իր քաղաքային դաշինք մը դաւանիլը եւ այլն երբեք պաշտօններ չեն կրնար ըլլալ զմեզ իբր անհատաւ եւ ամբարիշտ համարելու :

Հիմա ո՞վ կրնայ ուրանալ թէ կրօնական բարեշրջման մը ականատես եղած չեն տնոնք որոնք այս վերջին 50 տարիներուն մէջ աւարած են :

ԱՐՄԱԿ Ա. ԱԼՊՈՅԱՅԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԵՒ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ

Բերկրութեամբ կը ծանուցանենք՝ Զատիկ առթիւ Ազգ. Պատրիարքարանին եղած Կայսերական շնորհը :

Կայս. անձնական Գանձուն նախարար Վսեմ. Սագրը Յովհաննէս Էփէնտի չորեքշաբթի օրը Ազգ. Պատրիարքարան գալով, Ս. Պատրիարք Հօր յանձնեց 25,000 դր. ի գումար մը զոր Վեհ. Սուլթանը՝ իր հայրական ծանօթ բարեգթութեամբ՝ կը շնորհէ որք եւ աղքատ աղայոց, Սագրը Էփէնտի նոյն գումարին հետ յանձնեց նաեւ Թէգքէրէ մը ուրուն մէջ յիշուած է թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է շնորհել նոյն գումարը որք եւ աղքատ աղայոց : Ս. Պատրիարք Հայրը խորին երախտագիտութիւն յայտնեց Կայսերական այս բարձր հոգածութեանը առթիւ եւ բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Կ. Վեհափառութեան արեւշատութեանը համար :

Վեհ. Սուլթանը նոյնքան գումար մըն ալ շնորհած է Յունաց Պատրիարքարանին եւ զա.

նազան գումարներ՝ միւս Պատրիարքարաններուն :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը Ս. Զատիկ տօնին շնորհաւորական այցելութիւնները պիտի ընդունի նոյն տօնի երկրորդ օրը, երկուշաբթի (Ապրիլ 2), Ժամ 7 1/2ին, Ազգ. Պատրիարքարանի մէջ :

(Կնիք Ազգ. Պատրիարքարանի)

ԱՌԱՋԻՆ ՎՃԱՐՈՒՄԸ

Գրիգոր Էփ. Գարակէօգեան շարթուս մէջ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան ատենապետ Պատրիկ Էփ. Կիւլպէնկեանի յանձնեց 600 սովոյ գումարը զոր Ազգ. Վարչութիւնը որոշած էր տալ նոյն հաստատութեան՝ Գարակէօգեան կոտակի տոկոսէն : Այս գումարը, ինչպէս յայտնի է, պիտի գործածուի Որբանոցի սաներուն ու սանուհիներուն առողջական վիճակին բարելաւման, որուն միջոցներուն վրայ կը խորհրդակցի Հոգաբարձութիւնը :

ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՅՈՅՑ

Ստացանք Ուսումն. Խորհուրդին պատրաստած նոր Վիճակացոյցը, որ կը պատկերացնէ 1901 յունուար 1ին Կ Պոլսոյ թաղային վարժարաններուն վիճակը, իրաքանչիւրին աշակերտներուն ու աշակերտուհիներուն, ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն թիւովը, ծախքերու, հոտոյթներու եւ յարակից ամէն մանրամասնութիւններով: Այս խղճամբն աշխատութիւնը, զոր ստորագրած են Տարթ. Վահրամ Լ.Ք. Թորգոմեան (ատենապետ) եւ Պօլոս Է.Ք. Քէրէտէճեան (ատենադպիր) Ուսումն. Խորհուրդին պատիւ բերող գործ մըն է համբերատար պրպտումներով ու ձեռնհաս ազդիւրներէ քաղուած ծանօթութիւններով կատարուած, որուն պիտի յաջորդէ մօտ աւտենէն, ինչպէս արդէն ծանուցուեցաւ, գաւառային դպրոցներուն վիճակացոյցը: Արդի Ուսումն. Խորհուրդը, իր կազմութենէն ի վեր ամէն տարի կանոնաւորապէս կը հրատարակէ Կ. Պոլսոյ թաղային վարժարաններու վիճակացոյցը, որ մասնաւոր ուսումնասիրութեանց կրնայ աւարկայ ըլլալ եւ մեր կրթական գործին գոնէ նիւթականին մասին ճշգրիտ գաղափար մը տալ: Այս անգամուանը կը պարունակէ նաեւ բազմաթիւ վիճակացոյց մը 1897-98-99-1900-1901 տարիներուն, որոնց վրայ արագ ակնարկ մը նետելով կը բաւականանանք այսօր: Այդ հինգ տարեշրջաններուն մէջ ուսուցիչներուն թիւը եղած է 141-175-181-179-189 եւ ուսուցչուհիներունը՝ 58-74-93-103-111: Իսկ աշակերտներունը, մանչ եւ տղիկ, 3765 (1897ին), 4483 (1898ին), 4923 (1899ին), 5351 (1900ին) եւ 5643՝ այս տարուան սկիզբը: Ընդհանուր ծախքը, միջին հաշուով, 85 000էն 77 000 զրշ. ին մէջ կը տարբերի: 1898ին միայն զգալի նուազում մը կը ցուցնէ, 63.953 զրշ. ըլլալով:

Վերեւ յիշուած աշակերտներէն զատ, Պետական վարժարանները կը յաճախեն՝ 215 ուսանողներ, մասնաւոր հայ վարժարաններ՝ 390 մանչ եւ 150 տղիկ, հայ հռոմէական եւ հայ բողոքական վարժարաններ՝ 284 մանչ եւ 195 տղիկ, օտար վարժարաններ՝ 290 մանչ եւ 299 տղիկ (այս վերջիններուն թիւը, նախորդ տարիներուն հետ բազմաթիւ նուազում մը ցոյց կուտայ, կարծենք):

Կ. ՊՈԼՍՈՅ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ

Պատիկ վիճակացոյց մըն ալ Մատիսի իրմբագրութիւնը ձեռնարկած էր պատրաստելու,

աւելորդ է ըսել թէ ձեռնհաս ազդիւրի մը դիմելով. — Կ. Պոլսոյ աւագերէցներուն, ծխատէր քահանաներուն եւ հիւր քահանաներուն վիճակացոյցը. — որ հրատարակուած է ներկայ թիւին մէջ, իրաւ է որ վարժարանական վիճակացոյցի մը շահեկանութիւնը ու օգտակարութիւնը չի կրնար ունենայ անիկա, բայց գէթ այժմէութիւն մը ունի Ջասիկ տաթիւ, այս տունօրհնէնքի օրերուն:

Քանի՞ քահանայ կը կարծէք որ ունենանք Կ. Պոլսոյ մէջ, Ենթադրաբար, լրագրութեան մէջ գրուածներէն, «ծուխ»ի ու նիւթական ապրուստի նուազութենէ տաաջ եկած գանգատներէն գատելով՝ պիտի կարծուէք թէ քանի մը հարիւրի կը հասնի անոնց թիւը, մինչդեռ իրականութեան մէջ հարիւր երեք է միայն, եւ ասոնց հինգն ալ հիւր քահանաներ ըլլալով, բնիկ քահանաներուն թիւը ո՛չ իսկ հարիւրի կը հասնի, եւ եթէ դիւրութիւն ըլլար միեւնոյն ժամանակ ստուգելու եւ նշանակելու թիւը Կ. Պոլսոյ հայ բնտանիքներուն որոնք տաներէց ունին, պիտի տեսնէինք — ինչպէս մօտաւոր հաշուով մըն ալ կարելի է ենթադրել — որ քահանայ զուլի պատկառելի քանակութեան մը համար ծուխերու թիւ մը պիտի լինար: Ուրեմն, ծուխերու բաժանման անհաւասարութիւնն է պատճառը որ աղքատ քահանաներ չեն պակսիր մեր մէջ, թէ ոչ՝ ապրուստի անբաւականութենէ եղած գանգատները կը չափազանցուին Տէր-Հայրերուն կողմէ:

Այս խորհրդածութիւնները կրնան սակայն հեռուները տանիլ զմեզ, ինչ որ չի ներքեր մեր Գրական Հանդէսի սահմանը: Օրաթերթերը, որոնք անընդհատ կը զրազին քահանայական հարցերով, խորհրդածութեան առատ նիւթ մը կրնան գտնել այս վիճակացոյցին մէջ, եթէ ուզեն, նոյն իսկ քահանաներու կարծիքն ալ առնելով:

Մեր այս հրատարակած ցուցակին մէջ քահանաներուն անունները նշանակուած են ձեռնագրութեան կարգով, բայց առաջին երկուքէն որոնք Պատր. Փոխանորդի եւ Առաջն. Փոխանորդի պաշտօն վարած ըլլալուն անջատուած են միւսներէն: Ձեռնագրութեան կարգով Երիցագոյնը կը ըլլայ Մայր Եկեղեցւոյ Տ. Անարոն Ա. քահանան որ ձեռնագրուած է 1849ին, — յորեւէ անի մը արժանի՝ եթէ քահանաներն ալ սովորութիւն ունենային յորեւեան տօնելու:

ՅՈՒՑԱԿ ԲԱՅԱՆԱՅԻՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅՔ

- Տ. Յովհաննէս Մկրեան . Եկ. Բերա . ձեռն . 1866 Մարտ 5 . Նիս . Պատր . Փոխանորդ . Խ. Փ. (1) .
- Տ. Սահակ Տէր Սարգսեան . Եկ. Օրթաքէոյ . ձեռն . 1854 Մարտ 8 . Նիս . Առաջն . Փոխանորդ . Խ. Փ. :
- Տ. Անարոն Խորշահեան . Մայր Եկ. 1849 Մարտ 16 . Փ. :
- Տ. Կարապետ Սէթեան . Գուզկունճուք . 1857 Մարտ 17 . Խ. Փ. :
- Տ. Դրոնեսիոս Ճիզմէճեան . Գընալը . 1857 Հոկտեմբեր 27 .
- Տ. Միքայէլ Վարժապետեան . Պալաթ . 1859 Յունիս 19 . Փ. :
- Տ. Մինաս Պէղազեան . Խասքէոյ . 1863 :
- Տ. Յովհաննէս Արսէնեան . Պէշիքթաշ . 1866 Մարտ 14 .
- Տ. Յովհաննէս Շահպաղեան . Սամաթիա . 1867 Հոկտեմբեր 15 . Փ. :
- Տ. Խորէն Փէշիվանեան . Իւսկիւտար Եէնի-մահալէ . 1868 Մայիս 17 . Խ. Փ. :
- Տ. Գարրիէլ Խանճեան . Իւսկիւտար Սէլամիէ . 1868 Մայիս 17 . Խ. Փ. :
- Տ. Կարապետ Սանտալճեան . Գատըքէոյ . 1872 Դեկտեմբեր 2 .
- Տ. Յովհաննէս Մերկերեան . Կէտիք փաշա . 1877 Մարտ 13 .

ԵԽԱՏԵՐ ՔԱՀԱՆԱՅՔ

- Տ. Թաղէոս Թաթարեան . Բերա . 1857 Յունիս 20 .
- Տ. Նշիլէ Սէրէնեան . Մայր Եկ. 1859 Մայ. 3 :
- Տ. Բարթողիմէոս Պօղոսեան . Եէնի գարու . 1859 Մայիս 3 .
- Տ. Իգնատիոս Խաչատուրեան . Գոււ գարուի դուրս . 1859 Մայիս 18 .
- Տ. Վրթանէս Պալեան . Օրթաքէոյ . 1863 Յունիս 23 .
- Տ. Արիստակէս Ճիզմէճեան . Մայր Եկ. 1866 Հոկտեմբեր 23 . Խ. :
- Տ. Թաղէոս Սիմոնեան . Սամաթիա . 1869 Փետրվար 27 .
- Տ. Դաւիթ Ճանիկեան . Աղաալը . 1869 Մարտ 9 .
- Տ. Ներսէս Տէր Նշիլէեան . Սամաթիա . 1869 Ապրիլ 27 .
- Տ. Փիլիպպոս Տէր Յակոբեան . Սամաթիա . 1869 Ապրիլ 27 .

- Տ. Գէորգ Անդրանիկեան . Բերա . 1869 Յունիս 9 .
- Տ. Սահակ Պետրոսեան . Պէշիքթաշ . 1870 Փետրվար 14 .
- Տ. Հմայեակ Յովհաննէսեան . Կէտիք-փաշա . 1873 Յունվար 13 .
- Տ. Գարեգին Ղազարոսեան . Եէնի-գարու . 1873 Յունվար 13 .
- Տ. Ոսկի Օհանեան . Մայր Եկ. 1873 Ապրիլ 15 .
- Տ. Արսէն Պապայեան . Իւսկիւտար Սէլամիէ . 1873 Հոկտեմբեր 28 .
- Տ. Խորէն Փափազեան . Իւսկիւտար Սէլամիէ . 1873 Դեկտեմբեր 21 .
- Տ. Յակոբ Փափազեան . Կէտիք-փաշա . 1874 Մարտ 16 .
- Տ. Վահան Գրիգորեան . Պալաթ . 1876 Օգոստոս 8 . Փ. :
- Տ. Գրիգոր Թէվէքէլեան . Էյուպ Տէֆթէր-տար . 1877 Մարտ 12 .
- Տ. Միքայէլ Ոսկերչեան . Մաքրիքէոյ . 1878 Մարտ 22 .
- Տ. Աբրահամ Կիրեղեան . Խասքէոյ . 1878 Օգոստոս 20 .
- Տ. Կարապետ Յակոբեան . Սամաթիա . 1878 Նոյեմբեր 25 .
- Տ. Խաչատուր Դերձակեան . Մայր Եկ. 1879 Յունիս 3 .
- Տ. Յարութիւն Դերձակեան . Էյուպ . 1880 Դեկտեմբեր 20 .
- Տ. Միքայէլ Աշճեան . Մայր Եկ. 1882 Ապրիլ 1 :
- Տ. Պօղոս Պէյազեան . Մայր Եկ. 1882 Ապրիլ 1 .
- Տ. Պետրոս Յակոբեան . Պօյաճըքէոյ . 1882 Ապրիլ 1 .
- Տ. Մկրտիչ Նախնիքեան . Ռուսէլի-Հիսար . 1882 Յունիս 13 .
- Տ. Վահան Խոյեան . Գընալը . 1882 Հոկտեմբեր 17 .
- Տ. Արզար Արապեան . Սամաթիա . 1884 Ապրիլ 15 .
- Տ. Համբարձում Դերձակեան . Խասքէոյ . 1884 Մայիս 20 .
- Տ. Գարեգին Յովակիմեան . Ղալաթիա . 1884 Հոկտեմբեր 28 .
- Տ. Գարեգին Տէր Գէորգեան . Գոււգարուի դուրս . 1885 Փետրվար 1 .
- Տ. Ներսէս Նազիկեան . Բերա . 1885 Մայիս 31 .
- Տ. Գրիգոր Երէցեան . Պէյիւքաէրէ . 1886 Փետրվար 16 . Խ. :
- Տ. Մեսրոպ Տէր Մեսրոպեան . Ղալաթիա . 1886 Փետրվար 16 .

(1) Խ. լանջախառով պատուեալ .

Փ. ծաղկեալ փիլոնով պատուեալ .

- Տ. Համազասպ Պատմաճեան. Պէյքօղ. 1886 Մարտ 9.
- Տ. Աբէլ Երէջեան. Պալաթ. 1886 Մարտ 16.
- Տ. Բարսեղ Կարմրուկեան. Եէնիքէօյ. 1886 Ապրիլ 1.
- Տ. Յուսիկ Քաջունի. Գարթալ. 1886 Օգոստոս 3.
- Տ. Կոմիտաս Սպեան. Բերա. 1887 Մարտ 1.
- Տ. Խոսրով Գալիաքեան. Գատրքէօյ. 1887 Նոյեմբեր 14.
- Տ. Անանիա Յակոբեան. Սամաթիա. 1887 Նոյեմբեր 28.
- Տ. Եղիա Կարապետեան. Կէտիկ-փաշա. 1888 Փետրվար 21.
- Տ. Սարգիս Զօհրապեան. Մաքրիքէօյ. 1888 Փետրվար 21.
- Տ. Կարապետ Սահիանեան. Մայր Եկ. 1888 Փետրվար 21.
- Տ. Բարթոլոմէոս Թաղէոսեան. Իսկիւտար Եէնիմարքէ. 1888 Նոյեմբեր 21.
- Տ. Խորէն Յարութիւնեան. Բերա. 1889 Սեպտեմբեր 10.
- Տ. Արիստակէս Վարժապետեան. Եէնիգարու. 1889 Նոյեմբեր 5.
- Տ. Վարդան Պաղտատեան. Իսկիւտար Եէնիմարքէ. 1890 Հոկտեմբեր 9.
- Տ. Մեսրոպ Տէր Մեսրոպեան. Գարակէօմ. րիւք (Նրկիզեալ). 1892 Հոկտեմբեր 2 (Առօ. Բերա).
- Տ. Սուքիաս Պալքեան. Գուրուչէշմէ. 1892 Հոկտեմբեր 19.
- Տ. Յակովքոս Տէլէճէքեան. Բերա. 1893 Յունիս 27. Խ.
- Տ. Հմայեակ Էքսէրճեան. Իսկիւտար Սէլամիէ. 1893 Յունիս 11.
- Տ. Վահրամ Յակոբեան. Իսկիւտար Սէլամիէ. 1893 Յունիս 11.
- Տ. Արիստակէս Թաչճեան. Գարակէօմ. րիւք (Նրկիզեալ). 1893 Յունիս 28 (Առօ. Բերա).
- Տ. Խորէն Վարդանեան. Գումգարուի զուրա. 1894 Փետրվար 20.
- Տ. Վարդան Դերձակեան. Գատրքէօյ. 1894 Փետրվար 20.
- Տ. Ղեւոնդ Սուքիասեան. Մայր Եկ. 1894 Փետրվար 20.
- Տ. Պետրոս Տէր Պետրոսեան. Մաքրիքէօյ. 1894 Մայիս 8.
- Տ. Գրիգոր Արրահամեան. Պալաթ. 1894 Սեպտեմբեր 4.
- Տ. Գէորգ Անանեան. Ֆէրիքէօյ. 1894 Դեկտեմբեր 23.
- Տ. Գէորգ Պաքալեան. Մայր Եկ. 1895 Փետրվար 26.
- Տ. Սուքիաս Արիստակէսեան. Գումգարուի զուրա. 1895 Փետրվար 26.
- Տ. Եղիազար Պօղոսեան. Եէնիգարու. 1895 Փետրվար 26.
- Տ. Տրդատ Պօյաճեան. Կէտիկ-փաշա. 1895 Փետրվար 26.
- Տ. Պետրոս Կարապետեան. Կէտիկ-փաշա. 1895 Փետրվար 26.
- Տ. Արիստակէս Հիսարլեան. Սամաթիա. 1896 Փետրվար 25.
- Տ. Մուշեղ Նաւապարեան. Գարթալ. 1896 Յունիս 16.
- Տ. Ղեւոնդ Մուրատեան. Օրթաքէօյ. 1898 Փետրվար 8.
- Տ. Աւետիս Ռափայէլեան. Սիմենիա. 1898 Յունիս 19.
- Տ. Դրիգոր Զէպէճեան. Բերա. 1898 Օգոստոս 9.
- Տ. Սահակ Փափաղեան. Բերա. 1898 Օգոստոս 9.
- Տ. Մուշեղ Մարաբրոսեան. Ալէմտաղի. 1898 Հոկտեմբեր 23.
- Տ. Տաճատ Փաշայեան. Իսկիւտար Սէլամիէ. 1898 Դեկտեմբեր 13.
- Տ. Աստուծոյ Խաչատուրեան. Թօփգարու. 1899 Փետրվար 14.
- Տ. Մարտիրոս Գալֆայեան. Կէտիկ-փաշա. 1899 Մարտ 14.
- Տ. Դրիգոր Յովհաննէսեան. Գուրուչէշմէ. 1899 Մայիս 23.
- Տ. Եղիշէ Գալֆրոսեան. Իսկիւտար Եէնիմարքէ. 1899 Հոկտեմբեր 10.
- Տ. Եղիշէ Մանափեան. Սամաթիա. 1899 Նոյեմբեր 7.
- Տ. Սերովքէ Ներշապուհեան. Սամաթիա. 1899 Նոյեմբեր 7.
- Տ. Թաղէոս Տէր Մեսրոպեան. Ղալաթիա. 1900 Փետրվար 6.
- Տ. Արրահամ Էպէսեան. Իսկիւտար Սէլամիէ. 1900 Յունիս 30.
- Տ. Յովհաննէս Տէր Սահիանեան. Ազատլը. 1900 Նոյեմբեր 19.

ՀԻՒՐ ՔԱԶԱՆԱՅԻ

- Տ. Դաւիթ Տէր Աւետիսեան. Գումաթլի. 1883 Սեպտեմբեր 11.
- Տ. Մամարէ Յովհաննէսեան. Ֆէրիքէօյ. 1885 Հոկտեմբեր 5.
- Տ. Խորէն Քիւրճեան. Այ-Սիւքիանոս. 1890 Օգոստոս 12.
- Տ. Կարապետ. Գատր-փաշա.
- Տ. Պարգեւ Ամատունի. Պէշիքթալ.

ԱՐՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսընլար եօզուրու, Թիւ 27

Թ Ղ Թ Ա Վ Ա Ճ Ա Ռ

Վ. Ե Ի Հ. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ

Պոլիս, Սուլթան-Համամ, բաղնիքին կից քիւ 18

Տէր-Ներսէսեան Թղթաժառանգունը՝ իր նախկին տեղը վերահաստատուած՝ դրամատանց, վաճառատանց, գրասենեակի եւ դպրոցներու վերաբերեալ ճոխ ու ընտիր ապրանքներ բերել տուած է։ Գլխաւորաբար հոգ կը տանի Տպագրութեան (փոխանակագիր, շրջաբերական, քարթ ար վիզիթ, հարսանեաց հրաւիրագիր եւլն. եւլն.) եւ կազմի վերաբերեալ գործերու, եւ կը ստանձնէ այս կարգի ամէն յանձնարարութիւններ զորս կը կատարէ փութով, խնամով եւ խիստ գիւրամատչելի պայմաններով։

Ամէն անոնք որ հաճին անգամ մը պատուել Տէր-Ներսէսեան վաճառատունը՝ մեծապէս գոհ պիտի մնան ապրանքներու ճոխութենէն ու ընտիր հանգամանքներէն, մանաւանդ յանձնարարութեանց փութով կատարուածն եւ այն ուղղամտութենէն որ վաճառատան կէտ նպատակն է։

Դաւառներէ եկած յանձնարարութիւնները փութով կը կատարուին։

6—10

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ Երաւաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿՍՅԱՑՈՒՑԻՉՔ ԷՏՈՒԸՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալըմնի խան, Կ. Պոլիս։

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

ՏԲՔ. Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ – ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ, 396

(Եաննի գարեջրասան վրայի յարկը, հիւղ Զրպուհեանց դէմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենատարտիկ ցաւած ակօսանքը մեկ անգամեւ կը լեցնեն. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ։

Նորահար եղանակաւ, նորը, ճաշակաւոր եւ զխնայկուն արհեստական ակօսանք կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դիմելի ձեւաւորութիւն ըստ տարիքի, ծանոթութիւն եւ ազատ արձաւանդութիւն երաշխաւորուած։

Բերնի հիւանդութիւնք կատարելագոյն կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն։

Յ. Գ. Ձմեռները կիրակի օրերն ալ (մինչեւ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (մինչեւ կես զիշեր) հիւանդ կ'ընդունին։

Ծանօթ. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ԶՈՒՆԻՆՔ.



РОССИЯ — ROSSIA




Ա.ՊԱ.ՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ	34,775,642 ֆրանք
երաշխաւորութեան դուժար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »
Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մախսաւան հին տեղը	
Ընդհ. Քննիչ	
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ	
Ընդհ. Գործակալ	
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵԼՆ	

ԸՆՏԻՐ, ՀՈՏԱԻԷՏ, ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

ԹԷՅ



ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ



ԹԷՅ

Ամէն տեսակ թէյերու նոր բերքերէն մեծ քանակութեամբ հասած է ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, թէյի սիրահարներն ու ամէնէն փափկաճաշակներն իսկ վերջին ծայր գոհ պիտի մնան այս թարմ թէյերէն, որոնք ընտիր, առողջապահիկ եւ հոտաւէտ ըլլալով հանդերձ անմրցելի ըսուելու աստիճան աժան են:

Գաւառներու յաճախորդք թէյ գնելու համար պէտք չունին անձամբ գալու, նամա-

կով թող դիմեն ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատան, ուր ամենամեծ խնամով, զգուշաւորութեամբ կը գործադրուին ամէն կարգի յանձնարարութիւնք՝ մեծաքանակ եւ փոքրաքանակ, Դիւրութեան համար՝ թէյերուն փոխարէնը կարելի է վճարել նաեւ երբ ապրանքները բնացուին ու ֆոնօշիմէնքօն ներկայացուի գնողին, Կեղծ թէյ չգնելու համար հաճեցէք ուշադրութիւն ընել վերի մարքային եւ ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ անուանք, Կեդրոնատեղին՝ Կ. Պոլիս, Պահճէ Գաբու, Ճէլալ Պէյ խանի կից, թիւ 10, Կ. Եաւրուեան Յ. Իսագուլեան մեծ վաճառատունը:

ՀԱՊԻԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ

ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ

Մ. ՏԷՐ - ԴԱԻԻԹԵԱՆ

ՀԱՊԻԿ

Թիւ 21, Ղալաթիա, Վոյվոսա փողոց, Գաղղիական նաւակայանի դիմ

Խիստ աժան գիներով կը ծախէ Ֆլանէլ, քլթան եւ բիքէ չապիկներ, փողկապ, օձիք, թեւնոց, կոճակ (ոսկեզօծեալ ու պարզ), գուլպայ, թաշկինակ, զմեղի, խոզանակ, սանաոր ու անուշահոտութեանց ամենաընտիր տեսակներ:

Միշտ խնամով ու զիւրամատչելի գիներով կը պատրաստէ նաեւ չափու վրայ ամէն տեսակ չապիկ, գիշերազգեստ, օձիք, թեւնոց, ու կը կատարէ ներքին ձերմակեղինաց յանձնարարութիւններ:

Հանրաձանօթ Մ. ՏԷՐ ԴԱԻԻԹԵԱՆ չապիկի գործարանը նորաձեւութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան ու գիներու տարապայման աժանութեան տեսակէտով փտահելի ու լաւ յանձնարարելի տուն մըն է: